

Անվերջ փորձով կը խուզարկէր: Անոր առէք իր անկողինն,
 Աւ իր կինն՝ ըր տարէք դամբարանէն: Ան պիտի իր
 Անտոնիոսին քովը թաղուի. աշխարհէն վրայ ոչ մէկ չիբիմ
 Պիտի իր մէջ ընդգոգէ զոյգ մը այսքան մեծահաշակ:
 Ասոնց նըման բարձրանըշան դիպուածներ կ'ազդեն նոյն իսկ
 Զանոնց նիւթով՝ առթողին վրայ, ու անոնց պատմութեան մէջ
 Արգահատանը նոյնքան բաժին ունի որքան փառքն
 Անոր որ զիրենք ողբի ենթարկեց: Մեր զօրքերուն
 Բանակը ծանր Հանդէսով պիտի ներկայ գտնուի
 Դամբարանէն յուզարկին: Աւ յետոյ Հռոմ՝ Դոյաբէլլա՝,
 Եկուր, նայէ՛ որ վեհ շուք՝ ու կարգ տրուի այս մեծ
 Հանդիսութեան:

Թարգմ. Գ. ՓԱՌՆԱԿ՝

Վ. Ե. Բ. Զ.

ՄԻՒԿԱՆՁԱՊԵՒ ՅՈՒՄԵՆԱՆԸ

Աւարտութեամբ կ'իմանանք որ Հիւրվան-
 դադէի յօրեկեանը տօնելու համար կ'այսուած
 է Թիֆլիսի մէջ կարգադիր մասնախումբ մը՝
 նախագահութեամբ Պ. Համբարձում Գեղեթե-
 կանի: Այդ մասնախումբը արդէն որոշեր է որ
 յօրեկեանը տեղի պիտի ունենայ մայիս 7/20ին,
 Թիֆլիսի Արքուանական Թատրոնին մէջ: Մասնա-
 խումբը որոշեր է նաև ի լոյս ընծայել ի պատիւ
 Հիւրվանդադէի յօրեկեանական ժողովածու մը՝
 որուն պիտի մասնակցին ռուսահայ, թրքահայ
 և պարսկահայ գրողներ, և մատչելի գնով Ժո-
 ղովրդական հրատարակութիւն մը՝ որ պիտի
 պարունակէ ծաւազարը և կենսագրական ու-
 սումնասիրութիւն մը Հիւրվանդադէի մասին:
 Յօրեկեանի օրը՝ հանդիսաւոր թատերական
 ներկայացում տեղի պիտի ունենայ:

Զենք տարակուսի որ աշխարհէն ամէն
 կողմը գտնուող Հայերը պիտի մասնակցին այս
 ազգային-գրական մեծ հանդէսին: Թէպէտ
 տակաւին չընթերցողական չենք ընդունած և
 հասցէ մը չկայ նշանակուած, և կ'արծենք սա-
 կայն թէ անոնք որ կ'ուզեն յարաբերութեան
 մասնէ կարգադիր մասնախումբին հետ ուղարկելու
 համար ուղղի՞մ կամ նուիրատուութիւն, կ'որոշ
 են զիսկէ հետեւեալ հասցէին՝

Mr. Ambartsoum Mélikoff.

Tiflis (Caucase, Russie)

Անհրաժեշտ է որ մասնաւորապէս թրքա-

հայ մտաւորականութիւնը հանդիսաւորապէս
 մասնակցի ռուսահայ մեծ գրագէտին յօրեկ-
 եանին: Յանկալի էր որ Պոլսէն պատգամաւոր-
 ներ ուղարկուէին, և կամ Թիֆլիսի տունէն
 յետոյ՝ Պոլիս հրաւիրուէր յօրեկեանը և իրեն
 ի պատիւ ցոյց մը կատարուէր նոյն իսկ Պոլսոյ
 մէջ. լաւագոյն է որ այս երկուքն ալ տեղի
 ունենան:


ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

ԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Առհիտի ընթերցողները կը յիշեն այն ներքո-
 ղայից գնահատումները որ յայտնուեցան փարիզեան
 մամուլին մէջ՝ Տիգրան Խան Քելեկեանի արեւելեան
 նկարագրող կերպաներու հաւաքածուն ցուցադ-
 րութեան առթիւ և որոնց թարգմանութիւնը հրա-
 տարակցեցին: Յուցահանդէսէն քիչ յետոյ՝ Տիգրան
 Խան այդ կերպաններուն գունաւոր վերադարձու-
 թիւնները պարունակող շքեղ ալպոմ մ'ի լոյս ընծա-
 յեց, որ ահագին յաջողութիւն ունեցաւ Եւրոպայի
 գեղարուեստական շրջանակներուն մէջ և որուն
 յառաջաբանին մէջ, նշանաւոր մասնագէտ Պ. Ժիւլ
 Կիֆրէ կը գրէր հետեւեալը.

«... Արեւելեան կերպաններու հաւաքածուն,
 զոր Պ. Քելեկեան երկար առնէն ի վեր սկսած է
 ճիշտացուցած է, անուարակոյս մին է ամենէն կա-
 րեւորներէն, մին այլպան տիպերով ամենէն հա-



Գարսիական պեակ, Սուրբանապատի մեջ գտնուած (ԺԴ. դար)

բուստներէն, զոր շատոնց ի վեր տրուեստասէր ճը կաղճած ըլլայ։ Այս է կարծիքը Տր. Ճուլիուս Լեսինկի, այս նիւթին ձէջ ամենէն ձեռնհաս ծառնազէտին։ Ժն. և ԺԶ. դարու դարգերէ և ճետաքսեղէններէ բաղկացած, Քելեկեան հաւաքածան կ'ընծայէ զար դարուեստական ձոթիֆներու հազուադիւս խմբում ճը և անզուգական շարք ճը թէ՛ փայլուն և թէ՛ զճայլելիօրէն ներդաշնակ երփնաւարմանց։ Այն որ ծօտէն պիտի քննէ այս զճաղղութիւնները որ նախ և առաջ տարանման կը թուին, պիտի նկատէ որ անոնց ձեծադոն մասը սկզբնական տարբերութեան բաւական սահմանափակ թուի ճը կը վերածուի։ Զուածն ճետայնորը, որ սրածայր կ'երկարի և առաւել կ'աճ նուազ զարդարուն արեգներով կը

չըջապատուի, այս զարդարութեան ամենէն սովորական ձեւերէն մին կը կազմէ։ Մերթ մահիկը կ'երեւայ. ճերթ լուսնին լիալիւր սկաւառակը բովանդակ ամբողջութեանը ճեկնակէտը կը դառնայ։ Խ'նչքան հնարամիտ գուգախառնումներ անպարար կը վերանայողներ զճաղղութիւնը։ Խ'նչ անպարար երեւակայութիւն՝ բնատուրակը հնարողին ծօտ։ Կարելի չէ՝ ճիթէ տիպար-շարադրութեանց որոշ թուի ճը ճէջ խմբել այլ անհուն բազմութիւնը ձեւերու, որ ամենին ալ կը հնարանդին անխախտ երկրաշափական օրէնքներու։ Աւերելով խառնաշփոթութեան ճը ներքեւ, համաշափութիւնը շուտով ի յայտ կուգայ՝ ուշադիր աչքին։ Այդ բարդ քճահաճոյքները կը հպատակին անձուկ կանոններու, որոնց բանաձեւը



Դանսակեան պնակ (ԺԶ. դար)

ուշագիր ուսումնասիրութեամբ ճը հնարաւոր պիտի ըլլար սահմանել: Երկրին ծագիկներն ու անասունները գլխաւոր դերը կը կատարեն հոս: Երկուքն ալ շատ ազատօրէն արտայայտուած են՝ ապշեցուցիչ երեակայութեամբ ծ'օծտուած արուեստագէտներու ձեռքով: Այս հաւաքածուն կը պարունակէ յատկանշական նմուշներ այս բազմազան տարրերու անթիւ շարախառնութեան: Մարդկային դէմքն ալ հոն իր տեղը կը գրաւէ՝ հակառակ Դուրանին արգելքներուն: Մերթ կը տեսնենք որոտողներ որ առկուծ կամ այծեամբ կը հալածեն՝ ծղիզիին ձիարշառներով՝ ճերթ՝ ծանրագէճ անձ ճը՝ բրգաձեւ փաթթոցով կ'երեսայ՝ կանգուն, բազէ ճը բռնցքիին վրայ

սրուակ ճը ձեռքը: Ուրիշ տեղ կը ներկայացուի պարսիկ պատերազմիկին յաղթանակը՝ իր դարաւոր սուրիլին կիսալայրենի Մանկոյին վրայ: Կը տեսնենք ձիաւոր ճը, որ իր ձիուն գաւակն առած է դեռաւոր պատանի ճը և ձեռքը բռնած է ծայրը չուանի ճը որով կապուած է բռնուածքներով աստղազարդեալ շինական պատմութեան ճը հագած երկար պէխերով Գայմուք ճը: Յետոյ, ցանցքնուք ճըն է երկններանգ փետուրներու, ամբողջ օդային աշխարհ ճը սիրամարգներու, թռթռակներու, թիթեռներու, տարօրինակ միջատներու: Ուրիշ կտորներու վրայ, կամաւոր խառնաշփոթութեամբ ճը իրար խաչաձեւող արձաւանիներ կ'անջատուին անհուն անուշութեամբ վարդա-

գոյն խորքի ճը վրայ: Ի՞նչպէս նկարագրել այդ խառնակոյտը ցնորակեալ անատմներու, ուր ձիւր, շունքեր, ճագարներ կը խառնուին ամէն ուղղութեամբ ծռած տերեւանքներու, և որոնց մէջտեղը հաւաքուած իր ճեմաշուք նոթը կ'արձակէ: Անկախանայի ձեռնարկ մը պիտի ըլլար՝ արտայայտել փորձել հրապոյրն ու փայլը այդ երկնագեղութեանց որոնց ամբաստան զարեւել ի վեր դիտ աշխարհ վառ են: Ժամանակը ճեղճացուցած է միայն զոյներուն պարծառութիւնը, ներդաշնակ ու խորհրդապահ ժամերու ունէլն այդ Արեւելցիները, ու կարող կ'ըլլային իրենց ներկերուն յայպիսի տեսողութիւն ծաղահոյժել, երբ մեր աշխարհն ներդրած գիտութեան գիւտերը յաճախ շատ վաղանցուկ արդիւնքներ միայն տուած են:

«... Այսպիսի խնամեալ և հաւատարմ հրատարակութիւններով է որ պիտի տարածուի ծանօթացումը և հիացական գնահատումը Արեւելքի այս արուեստներուն, Արեւելքին, որուն միշտ հարկատուները պիտի մնանք մենք: Պէտք է շնորհապարտ ըլլալ այն շատ նուրբ ճաշակով մարդուն, որ անխնայ արարածութեամբ մը, կայմեր է խնամքով ընտրուած օրինակներու այս շքեղ ամբողջութիւնը»:

Այժմ, Տիգրան խան իր արեւելեան անօթներու հաւաքածուն ցուցադրած է Լոնտոնի Քինսինկլթըն ծուռէնին մէջ, և հրատարակած է զարձեալ հոյակապ հատոր մը՝ այդ անօթներու վերաբարդութիւնը պարունակող: Նոյնքան, և կարելի է ըսել՝ աւելի խանդավառ հիացանկ արտայայտութիւններով կ'ուղջուծուի եւրոպական Տեյլնտակութիւններու կողմէ մեր տաղանդաւոր հայրենակցին այս երկրորդ ձեռնարկը: Լոնտոնի կարեւորագոյն հանգիստներէն մէկուն Saturday Review մէջ լոյս տեսած է ուսումնասիրութիւն մը, որուն թարգմանութիւնը պիտի հրատարակենք մեր յաջորդ թիւով: Իսկ հատորին երեւան առժամ Տիգրան խան ընդունած է Եւրոպայի ճեմադպին միանալեաներէն անհաշիւ յարգանքներ արտայայտութիւններով ին նամակներ, որոնցմէ երկուքին թարգմանութիւնը կուտանք այստեղ (1):

Նոստալգիկութիւն, 23 Հոկտ. 1910

« Միւրելի Պ. Քելեկեան,

« Ամենամեծ հաճույքով է որ ստացայ ձեր պատիեւրագարկ ցուցակը, որ արպարեւ արեւելեան

(1) Տիգրան խանի բարեհաճ արտոնութեամբ՝ կը հրատարակուի մահու երեք վերահաղորդութիւն հաւանածութիւն գեղեցկագոյն կտորներէն:

խեցեղորմութեան (ceramique) հոյակապ ամբողջութիւն մը կը ներկայացնէ: Կարծես թէ աշխարհիս մէջ չկայ ձեռքին չափ փորձառութեամբ և ճաշակով ընտրուած ու խմբուած հաւաքածու մը: Անհամբեր են այդ բոլոր գեղեցիկ աւարկաներուն խակականք տեսնելու, որովհետեւ սեւաների վերաբարդութիւնները, ինչքան և կատարեալ ըլլան, չեն կրնար բնականաբար այդ հոյակապ աւարկաներուն գոյնեւր և փայլի գեղեցկութեան ճասին զաղափար տալ:

« Ձեր հաւաքածուն թանկագին լիշատակարար մը (monument) կը կազմէ արեւելեան արուեստին պատմութեան համար»:

« Անթիւն կ'օգտուի մեզի շնորհակալ ըլլալու այն արուեստին համար, որով հաճեցաք մասնակցել Միւրելի Յուլիանի Յուլիանի Յուլիանի հաւաքածուն և ձեր խեցեղորմական կտորները բոլոր հասկողներին ու արուեստասէները մոգեցնել, և այսպէս՝ ձեր շնորհիւ է որ մեր Յուլիանիկէսը կրցաւ թիւ մը յաջողութիւն ունենալ: « Անգամ մը ևս շնորհակալ են ձեր գեղեցիկ հատորին համար որ կը ձօնացնէ մատենադարանս, և հաճեցէք ընդունել, սիրելի Պ. Քելեկեան, յարգալից զգացմանց հաւատարմը»:

ՏՊ. ՍԱԲԵՆ (Գ)

Փարիզ, 10 Դեկտեմբ. 1910

« Միւրելի Պ. Քելեկեան,

« Ի՞նչպէս շնորհակալ ըլլալ ձեր այլքան ազնիւ ուղարկին համար: Անիկ ճեմ հրճուած մը չէիք կարող պատճառել ինձի, և ինձի համար միշտ մեր հաճույք մը պիտի ըլլայ աչքէ անցնել այս սքանչելի դրոշմ որ մեզի կը պահէ լիշատակը արուեստի ուսարկաներու ամենէն գեղեցիկ հաւաքածուններէն մէկուն որ երբեք տեսնուած ըլլայ: Անոր էջերը թղթատելով, խնդրեմս կ'ըսէի թէ դուք կարող էք հպարտ ըլլալ ձեր կատարած գործով: Ինչ կ'անցնէր այնքան տարիներ նուիրելով պարականոն խեցեղորմութեան ամենէն կատարեալ օրինակները հաւաքելու, յետոյ զանոնք այսքան շքեղ կերպով վերադարձնելով, դուք ի պատիւ արեւելեան արուեստին կանխել էք լիշատակարար մը որուն ձեր անունը կ'ապրած պիտի մնայ: Ձեր հաւաքածունին հարստին ցուցադրութիւնը իբր պիտի պիտի ունենայ վերջնական յայտնագործումը ու ճշարտութեան, թէ՛ իր շարադրութեանց շնորհով, իր քննադէմ զարգացումն առնալով թեմքը, իր երանգապանակին ներդրածութեան ու փայլով, Արեւելքի խեցեղորմութիւնը աշխարհիս մէջ իր նմանը չունի: Մուսնին մը համար, որքան ալ հարուստ ըլլայ ան, այսպիսի ամբողջութիւն մը ունենալը՝ ճեմ փառք մըն է: հարեւրի չափ հատուկ կտորներու մէջ, մարդկութեան գեղարուեստական ճեմ արտայայտութիւններէն միոյն իսկաւար պատմութիւնն է:

(*) Պէրիքի Մուսնինի գլխաւոր վերահաշուներէն (conservateur) մին:

« Քանի որ այսուհետև պէտք
պիտի ըլլայ Մանշը անցնիլ Քելեկ-
եան հաւաքածուն տեսնելու համար,
ես երջանիկ եմ կարենալուս զիս
հաշուել այն սակաւաթիւ առանձնու-
շնորհեալներուն մէջ, որ իրենց զրա
զարանին մէջ պիտի ունենան անոր
այսքան հաւատարիմ և այսքան
թանկագին մէկ պատկերը »

« Դարձեալ շնորհակալութիւն,
սիրելի Պարոն Քելեկեան, և շատ
սիրով

Մ. Պիրի (*)

Այս բոլոր ներբողները, որ կ'ող-
ջունեն Տիգրան խանի ներաճաշակ
հասկացողի, հաւաքողի, դասաւորողի
տաղանդը, պատիւ կը բերեն ոչ միայն
իրեն, այլ և մեր ցեղին : « Հայերը,
որ Արեւելքի մէջ եւրոպական քաղա-
քակրթութեան տարածողն են եղած
դարերով, կոչուած են նաև արեւ-
ելեան հողին իր արտայայտութեանց
բոլոր բարդութեանը մէջ՝ ամենէն
ներքնիծաց և լիակատար եղանակով
Նւրագային ծանօթացնելու (1) : Տիգ-
րան խան կ'ապացուցանէ անգամ մը
ես թէ Հայ ցեղի այս յառա-
նութիւնը կարող է ունենալ : Ինքը,
որ արդէն ծանօթ է ու սիրուած՝
իր ազգասէր բարեգործ Հայ մը,
գեղարուեստի տիեզերական պատմու-
թեան տեսակէտով մեծ նշանակու-
թիւն ունեցող իր այս գերով և զաջն
վարպետ ձեռքով կատարած ըլլալուն
համար եւրոպացի մեծ քննադատ-
ներէ իր ստացած այսքան բարձր
գնահատումներով՝ աւելի ևս արժանի
է մեր շնորհաւորութեանց և շնոր-
հապարտութեանը :



Պարսկական շիշ, Դափրեծի մեջ գտնուած
(Ժ. Զ. դար)

(*) Մեծանուն Ջրամացի գեղարուեստագէտ ևս Արտ
Nouveau հաստատութեան նիւնադիր և տնօրէն :

(1) Chants populaires arméniens. — Introduction.